Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ — «ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ.

Լևոն Բաշալյանը հայ դասական դրականության նշանավոր դեմքերից է։ Նա դեռ 16 տարեկան պատանի էր, երբ ոտք դրեց «Մասիսի» խմբագրատուն և դարձավ նրա հիմնական աշխատակիցներից մեկը։ Եվ այդտեղ, իսկ հետո «Արևելք», «Հայրենիք» և այլ պարբերականներում նա սկսեց հրատարակել իր ստեղծագործությունները՝ հրապարակախոսական և քննադատական հոդվածներ, քրոնիկներ, հուշագրություններ, պատմվածքներ, նորավեպեր։

Բաշալյան դրողի մասին բարձր կարծիքներ են հայտնել նրա ժամանակակիցները՝ Ա. Արփիարյանը, Ալ. Շիրվանզադեն, Ա. Ջոպանյանը, Տ. Կամսարականը, Վ. Փափազյանը, Ե. Օտյանը, Վ. Թևքեյանը և այլ գրողներ։ Ա. Ջոպանյանը նրա արձակ երկերը համարել է «հոյակապ էջեր... որոնք օր մը մեր ծաղկաքաղներուն մեջ պիտի անցնին և հոն ընդմիշտ պիտի մնան իբր կատարյալ արձակի նմուշներ»։

Եվ զարմանալին այն է, որ չնայած դրողի ակնառու վաստակին, նրա ստեղծագործությունները մնացել են մամուլի էջերում ցրված և միայն 1943 թ. Փարիզում, 60 տարի ուշացումով, իսկ ապա 1962 թ. Երևանում հրատարակվեցին առանձին գրքերով։

Բաշալյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ հանգամանալից քննություն ցայժմ չկար։

Ահա այդ շնորհակալ գործը կատարել է գրականագետ Ս. Մանուկյանը։ Նա ուսումնասիրել է ոչ միայն դրողի ստեղծագործությունը, այլև նրա վերաբերյալ եղած գրեթե ամբողջ տպագիր և արխիվային գրականությունը, ժամանակի մամուլը։ Մանուկյանը ներկայացնում է Բաշալյանի կյանքի ընթացքը՝ շաղկապված հասարակական և գրական գործունեությանը։ Ընթերցողի աչքի առջև հառնում է գրողի աստանդական կյանքը. Պոլիս, Լոնդոն, Բաքու, Փարիզ, բազմաթիվ այլ վայրեր եղել են նրա հանգրվանները։

Կյանքի հոդսերով ծանրաբեռնված Բաշալյանը քիչ է ստեղծագործել, բայց իբրև հայրենասեր, իբրև հասարակական գործիչ աշխատել է օգտակար լինել իր բազմաշարշար ժողովրդին։ Այս առումով առավել հետաքրքրական են Խորհրդային Հայաստանի նկատմամբ դրողի տածած ջերմ վերաբերմունքը, մի շարք ավանների կառուցման գործում՝ իբրև ՀՕԿ-ի ներկայացուցիչ նրա կատարած հայրենասիրական գործը։

Բաշալյանի գրական ուղղությունը ռեալիզմն է եղել։ Ս. Մանուկյանը գտնում է, որ դա պատահական մի բան չէր դրողի կյանքում, և պայմանավորված էր այն մեծ տեղաշարժերով, որ կատարվում էին արևմտահայ կյանքի և գրականության մեջ։

Բաշալյանը կապվելով «Արևելքի» և «Հայրենիքի» խոշոր գործիչների՝ Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Տ. Կամսարականի և այլոց հետ, դառնում է «ութսունականների» կարևոր դեմքերից մեկը։ Ս. Մանուկյանը «ութսունականների» դերը, հայ ժողովրդի ինքնության պահպանման, նրա ազգային ինքնաճանաչության և ազատագրական ոգորումների հետ է կապում և ահա այս ելակետից էլ ճիշտ բնորոշում տալիս նրանց դավանած գրական ուղղությանը՝ ռեալիզմին։ «Հիրավի, «ութսունականները» չժխտելով հանդերձ ռոմանտիկական գրական դպրոցի պատմական դերը, գտնում էին, որ այդ ուղղությունը չի կարող ծառայել նոր ժամանակների հրատապ հարցերը, այդ թվում՝ իրենց առաջ ծառացած դժվարին խնդիրները լուծելու գործին։ Լիովին համոզված լինելով, որ միայն ռեալիստական գրականությունն է կոչված պատմական նոր պայմաններում դառնալու «դարի հոգեբանության» հայելին և առաջընթացի զենք, նրանք տեսականորեն սուր պայքար ծավալեցին ռոմանտիզմի դեմ, իսկ գործնականում՝ սկսեցին արևմտահայ ռեալիստական արձակի վերջնական հաղթանակի հիմքերը բարձրացնել»[1],— գրում է Ս. Մանուկյանը։

---

[1] Լ. Բաշալյան, էջ 40։

Այդ տեսական դրույթներով է առաջնորդվում Բաշալյանը և իր հոդվածներում առաջ քաշում ռեալիզմի դրականության պահանջները։ Նա գրել է ռուս և եվրոպական, և իհարկե, ամենից ավելի հայ դրականության, առանձին գրողների մասին։ Գրականագետը չի մոռանում ցույց տալու և ռոմանտիզմի դրսևորումները Բաշալյանի հայացքներում, հատկապես «1885 տարին Թուրքիո հայ դրականության համար» տեսության մեջ։ Սակայն ռեալիզմի հետաքրքրական օրինակներ են Լ. Տոլստոյի, Ի. Տուրգենևի, Ֆ. Դոստոևսկու, Հով. Հովհաննիսյանի մասին գրված, ինչպես նաև «Կյանքն ինչպես որ է», «Ժողովրդական գրականություն», «Կեղծ գրականություն» հոդվածները։

Ս. Մանուկյանը նույն հետևողականությունն է դիտում Բաշալյանի հրապարակախոսական քրոնիկներում, ակնարկներում և այլն։

Գրականագետն անհրաժեշտ չափով ներկայացնում է գրողի հրապարակախոսական և խմբագրական գործունեությունը։

Եվ այսպես, Բաշալյանը հիմնավորում է իր տեսական դրույթները և դրա հետ միասին, ստեղծում այնպիսի գործեր, որոնք «ութսունականների» շարժման իմաստը և միտքն էին արտահայտում։ 1880-ական թթ.-ի շարժման մեջ գրողի տեսական և ստեղծագործական կապերի միասնության հարցն է շոշափում Ս. Մանուկյանը։

Բաշալյանը 300-ից ավելի հրապարակախոսական և այլ հոդվածներ է գրել և ընդամենը մի քանի տասնյակ նորավեպ ու պատմվածք։ Նրա տաղանդը ի հայտ եկավ հատկապես նորավեպերում և պատմվածքներում։ Այդ ստեղծագործություններն այն խոշոր ներդրումն են, որ նա կատարում է հայ դրականության մեջ և կանգնում է այնպիսի վարպետների կողքին, ինչպիսիք են Գր. Զոհրապը, Երուխանը և ուրիշներ։

Մենագրության հեղինակը իրավացիորեն հիմնական շեշտը դնում է նորավեպերի և պատմվածքների վրա, նրանց նվիրում աշխատության մեծ մասը և նրանց միջոցով վեր հանում գրողի խոշոր կարողությունները։

Նա մանրակրկիտ կերպով վերլուծման է ենթարկում առաջին պատմվածքից մինչև վերջինը, սոցիալ-հոգեբանական նուրբ դիտումներ կատարում։ Սա կարևոր է, որովհետև այս ճանապարհով Ս. Մանուկյանը վերացականությունից հեռու է մնում։ Եվ բացի դրանից, ներկա ստեղծագործությունները գրողի կյանքի տարբեր հանգրվաններին զուգընթաց տալով, նրան ներկայացնում է իր զարգացման մեջ։ Բաշալյանի արձակը ավելի դիպուկ բնութագրելու և նրանց հասարակական ու գեղարվեստական արժեքը վեր հանելու նպատակով, Ս. Մանուկյանը հաճախ է անդրադառնում արևմտահայ արձակի այդ շրջանի նվաճումներին, հաճախ է գրողի ստեղծագործությունների զանազան կողմեր համեմատում Ա. Արփիարյանի «Կյանքի պատկերների», Գ. Զոհրապի, Տ. Կամսարականի պատմվածքների ու նորավեպերի հետ։ Այդ ֆոնի վրա ավելի հստակ են երևում Բաշալյանի նպատակադրումները, ինչպես նաև նրա արվեստի առանձնահատկությունները։

Առաջին նորավեպը, կամ ինչպես գրականագետը կասեր «նորավիպագրության նախափորձը»՝ «Հմայաթափը» դրվել է 1888 թվին և ժամանակակիցների կողմից գնահատվել իբրև գրական մի լուրջ երևույթ։ «Հմայաթափի» հիմնական հարվածն ուղղվում է կյանքից հեռու գրականության դեմ, որով սնվել է երկի հերոսը։ Գրականագետը Բաշալյանի կյանքի նկատմամբ քննադատական վերաբերմունքն է ընկալում և զարգացնում՝ մեկ միասնական թեմայի և «օժանդակ» թեմաների զուգորդումներով։

Հասարակական և հոգեբանական գծերն ավելի են բացահայտվում հետագա ստեղծագործություններում, որոնք նվիրված են հարուստ խավերի վարք ու բարքին և դրանց հակադրվում է պարզ ու հասարակ հոգիների կյանքը, նրանց «լուռ ցավերը»։ Այդ գործերում երևում է գրողի դեմոկրատիզմը, անսահման սերը ժողովրդի նկատմամբ։

Բաշալյանը չի մոռանում մաքառումի, ազատագրության և հայրենասեր հերոսներին։ Այդ թեմայով երբեմն նա ավելի առաջ է գրել, քան այնպիսի նշանակալից վարպետներ, ինչպիսիք են Դ. Զոհրապը և Տ. Կամսարականը։

Մենագրության արժանիքներից մեկն էլ այն է, որ վեր է հանում Բաշալյանի ջանքերը ժողովրդի մարտունակությունը բարձրացնելու ուղղությամբ և այդ առումով «ութսունականների» շարքում առաջին հաջող քայլերի պատիվը նրան վերապահում։

Ս. Մանուկյանը առանձին գլուխ է նվիրել նաև Բաշալյանի վարպետության ու լեզվի հարցերին։ «Մեծածավալ երկեր չի ստեղծել Բաշալյանը,— գրում է նա,— չի ընդգրկել համալիրդմանի, համապարփակ կենսագրվածներ, սակայն հյուսել է փոքր ու սրտահույզ իսկական դրամաներ ու ողբերգություններ, ըմբոստության, ազատագրական պայքարի, լավատեսության ու հայ-

բենասիրության ոգով հագեցված «ճնճղուկի կտուցի չափ» փոքր, բայց սրտեր թափանցող և հոգիներ փոթորկող ստեղծագործություններ»2։

Մի երկու դիտողություն։ Մեր կարծիքով, գիրքը է՛լ ավելի կշահեր, եթե հեղինակը, փոխանակ ժլատ մի երկու դիտարկումի, ավելի հանգամանորեն անդրադառնար նորավեպի տեսությանը և այդ հիման վրա, ավելի հստակ կերպով բացահայտեր Բաշալյանի նորավեպերի և պատմվածքների տարբերությունը։

Գրականագետը հետաքրքրական մի հարց է դնում, սակայն այդ հարցին հպանցիկ ձևով է մոտենում։ Խոսքը վերաբերում է Բաշալյանի դրականությամբ քիչ զբաղվելու հարցին։ Նա բերում է Ա. Ջոպանյանի կարծիքը, որ իբր Բաշալյանը եղել է «ծույլ» կամ գրական ասպարեզը լքող, «դասալիք»։ Սա թվում է, թե այնքան է։ ճիշտ չէ։ Դրա համար, թերևս եղել են ավելի խոր հասարակական և հոգեբանական պատճառներ, որոնց անդրադառնալը ցանկալի կլիներ։

Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ս/թ սեպտեմբերի 30-ին Մոսկվայում Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում կայացավ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, որը հրավիրել էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտները։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Լ. Սուչկովի ներածական խոսքից հետո, հանդես եկավ գրող Նիկոլայ Տիխոնովը, որն իր ելույթն ավարտեց Թումանյանին նվիրված նոր բանաստեղծությամբ։

Նստաշրջանին ակտիվ մասնակցություն ունեցավ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։ Մեծ ուշադրությամբ լսվեցին գրականագետներ Էդ. Ջրբաշյանի՝ «Թումանյանի ռեալիզմը», Սուրեն Աղաբաբյանի՝ «Թումանյանը և արդիականությունը», Խ. Սարգսյանի՝ «Աշխարհն ու մարդը Թումանյանի ստեղծագործության մեջ», Արամ Ինճիկյանի՝ «Թումանյանը և Շեքսպիրը» բազմաբովանդակ զեկուցումները։

Նստաշրջանում ուշագրավ զեկուցումներով հանդես եկան նաև Թումանյանի հնօրյա թարգմանիչ Ս. Շերվինսկին, վրաց գրականագետ Գ. Ցիցիշվիլին, դոկտորներ Լ. Հախվերդյանը, Ա. Դիմշիցը, թեկնածուներ Մարգարիտ Աթաբեկյանն ու Իրմա Սաֆրազբեկյանը։

---

2 Նույն տեղում, էջ 238։